ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ԹԵՈԴՈՍՈՒՊՈԼԻՍ/ԿԱՐԻՆԻ ԺՈՂՈՎԻ ՀԱՐՑԸ

Սարգիս Մելքոնյան

«Կանոնագիրք Հայոց»-ի ԽԲ (42) համարի տակ հիշատակվում է «Կանոնք սուրբ ժողովոյն որ ժողովեցան ի Թէոդոսուպալիս որ այժմ կոչի Կարնոյ քաղաք գլուխ[ք] Թ» վերտառությամբ մի կանոնախումբ[1], որն, ըստ նույն կանոնախմբի նախաբանի, գումարվել է «հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ»[2] և «յանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ»[3]: Կանոնախումբը բաղկացած է ծիսական տարբեր խնդիրներ կարգավորող և կարգապահական բնույթի ինը կանոններից[4]:

Գիտության մեջ կան բազմաթիվ կարծիքներ այս կանոնախմբի վերաբերյալ, սակայն մինչ օրս վերջնական պատասխան չկա նրա վավերականության, հիշատակվող ժողովի թվականի և այլ մանրամասների շուրջ:

Միջնադարյան գրեթե բոլոր հայ մատենագիրները հիշատակում են Թեոդոսուպոլիս/Կարինում տեղի ունեցած մի ժողովի մասին[5], որը կայա-

---

[1] Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 244-257 (այսուհետ՝ Կանոնագիրք Հայոց, հտ. Բ): Հմմտ. Մատենագիրք Հայոց, ԺՋ հատոր, ԺԱ դար, Երեւան, 2012, էջ 972-988 (այսուհետ՝ Մատենագիրք Հայոց, հտ. ԺՋ):

[2] Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 244:

[3] Նույն տեղում:

[4] Գարեգին Հովսեփյանն անդրադառնալով այս կանոնախմբին, նշում է, որ ձեռագրերում հանդիպում են ութ կետից բաղկացած կանոններ Կարնո ժողովի անունով: Ըստ երևույթին նա իր ձեռքի տակ չի ունեցել այս կանոնախումբը պարունակող բոլոր ձեռագրերը, սակայն նա նաև նշում է, որ այդ կանոնները որևէ կապ չունեն սկզբնաղբյուրներում հանդիպող Եզր կաթողիկոսի օրոք գումարված Կարինի ժողովի հետ (**Գ. Յովսէփեան**, Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյ, «Արարատ», 1917 թ., Թ-ԺԲ, ծանոթագրություն 1, էջ 741):

[5] **Փիլոն Տիրակացի**, Ժամանակագրութիւն, Մատենագիրք Հայոց, Ե հատոր, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 966. Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթուղիկոսի սակս ժողովոյ որ եղեն ի Հայք, Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 221. Պատմութիւն Յոհանու Մայրագոմեցւոյ, **Գարեգին Ա. Կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա, Անթիլիաս, 1951, էջ 33. **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւ-

ցել է բյուզանդացիների Հերակլիոս Ա կայսեր (610-641 թթ.)[1] և Հայոց Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի օրոք 633 թ.[2], սակայն դրանցից ոչ մեկը չի հաղորդում այս ժողովում ընդունված որոշումների մասին, կամ արդյոք եղե՞լ են այդպիսիք ընդհանրապես[3]: Առկա փաստերը թույլ չեն տալիս այս երկու ժողովները շփոթել, սակայն միջնադարյան սկզբնաղբյուրները լռում են Կանոնագրքում հիշատակվող Թեոդոսուպոլիս/Կարինում տեղի ունեցած մեզ հետաքրքրող ժողովի մասին, ինչը տարօրինակ է՝ հաշվի առնելով այս ժողովի անունով պահպանված կանոնների բովանդակության կարևորությունը:

Այսպիսով միակ սկզբնաղբյուրը, որտեղ հստակ տեղեկություն կա մեզ հետաքրքրող Թեոդոսուպոլիս/Կարինի ժողովի մասին, Կանոնագրը-

---

տի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 79. Տիեզերական պատմութիւն **Ստեփաննոս Վարդապետի Տարօնեցւոյ**, Փարիզ, 1859, էջ 88 (այսուհետ՝ Ստեփանոս Տարոնեցի), **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 54. Հարցմունք Գրիգորի Պահլաւունոյ եւ Վեստարխի եւ պատասխանի **Սարգիս Վարդապետի** եւ գիտնականի վասն առաջաւորի պահոցն, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 489: Եզր կաթողիկոսի մասնակցությամբ Կարինի ժողովի մասին հիշատակում են նաև որոշ քաղկեդոնական աղբյուրներ. Հ. Բարթիկյան, "Narratio de rebus Armeniae'' հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր», հ. 6, Երևան, 1962, էջ 469 (այսուհետ՝ Narratio). Թուղթ Փոտայ Պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց Մեծաց, Հանդէս ամսօրեայ, **Հ. Ն. Ակինեան**, 1968, էջ 70-71. **Արսեն Սափարացի**, Վրաց եւ Հայոց բաժանման մասին, **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հատոր Ա (Ե-ԺԲ դար), Յերեվան, 1934, էջ 44: Այլ աղբյուրներ ևս հաղորդում են Հերակլիոս Ա կայսեր և Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի օրոք տեղի ունեցած ժողովի մասին, սակայն այստեղ հղում ենք կատարում վերոնշյալ մատենագիրներին, քանի որ նրանք նշում են Կարին քաղաքի անունը, որպես ժողովի անցկացման վայր:

[1] **Ю. А. Кулаковский**, История Византии, Т. 1, 395-518 годы, 3-е изд., СПб., 2003, ст. 464.

[2] **Ս. Մելքոնյան**, Թեոդոսուպոլիս-Կարինի ժողովի թվականի հարցի շուրջ, «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածու, հ. Ժ, Երևան, 2015, էջ 171-185:

[3] Միջնադարյան գրեթե բոլոր հայ մատենագիրները նշում են, որ այս ժողովում Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսը խաբվել է հույների կողմից և քաղկեդոնականություն ընդունել, որի արդյունքում իբրև պարգև Հերակլիոս Ա կայսեր կողմից ստացել է Կողբի աղահանքերը: Այս ժողովում Եզր կաթողիկոսի կողմից բառի ուղղակի իմաստով քաղկեդոնականություն ընդունելու տեղեկության հետ մենք համաձայն չենք, ինչին կանդրադառնանք առանձին հոդվածով:

քի ԽԲ կանոնախմբի նախաբանն է, որն ամբողջությամբ կներակայացնենք այստեղ՝ առավել մանրամասն քննելու համար. «Սուրբ եւ աստուածասէր ժողովն որ ժողովեցան յամենայն քաղաքաց եւ յաշխարհաց Յունաց եւ ի Հոռոմոց եւ ի մեծն Հռոմայ հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ, որ նախանձայոյզ եղեալ աւրինացն Աստուծոյ եւ սրբոց առաքելոցն քարոզութեան, ժողով հրամայեաց լինել ի միջասահմանս աշխարհին Հայոց, Վրաց եւ Աղուանից: Որ ժողովեցան բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ եւ հրամանաւ նորին թագաւորին զսրբոց առաքելոցն զաւանդութիւնս եւ զսուրբ ժողովոյն Նիկիայ եւ զՃԾ-իցն որ ի Կոստանդնուպալիս եւ զՄ-իցն որ յԵփեսոս, զայն հաստատել հաւատ եւ նզովել զամենայն հերձուածողս զառաջինս եւ զմիջինս եւ զվերջինս: Նախ եւ առաջին զաղանդն Մարկիոնեայ եւ զաղանդն Արտեմոնի եւ զաղանդն Պաւղեայ Սամոստացւոյ եւ զաղանդն Արիոսի եւ զաղանդն Մակեդոնի և զտումարն Լեւոնի եւ զամենայն հերձուածողս, որք արտաքոյ սրբոց առաքելոցն քարոզութեան եւ սուրբ ժողովոյն են ասացեալ, արտաքս ընկենուլ յեկեղեցւոյ եւ աւտար համարել եւ ոչ հաղորդել ընդ այնպիսեացն եւ թագաւորական հրամանաւ յաքսորս բնակեսցէ այնպիսին մինչեւ ցաւր մահուան իւրոյ:

Եւ ժողովեցան բազում եպիսկոպոսք Վրաց եւ Աղուանից ի քաղաքին Թէոդոսուպալիս եւ միաւորեցան ի հաւատս սրբոց առաքելոցն եւ ի կանոնս զգուշաւորս գլուխս Թ»[1]:

Հաշվի առնելով հիշատակվող նախաբանում տեղ գտած հակասական որոշ հանգամանքներ, ինչպես նաև այն փաստը, որ մեզ հայտնի այլ սկզբնաղբյուրներ տեղեկություն չեն հայտնում այս ժողովի մասին՝ Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանցը[2] և Ներսես արքեպիսկոպոս Մելիք-

---

[1] Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 244-245, հմմտ. Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 972-973:

[2] Աբէլ արքեպիսկոպոսը, խոսելով Հերակլ կայսեր կողմից Կարինում գումարված ժողովի մասին, գրում է «Առաջին ժողով ի Կարին», սակայն իր ուսումնասիրության մեջ չի անդրադառնում Կարինում տեղի ունեցած այլ ժողովի: Սա մեզ ենթադրել է տալիս, որ հեղինակը, չանդրադառնալով մեզ հետաքրքրող ժողովին, այնուամենայնիվ այն համարել է 633 թ. Կարինում տեղի ունեցած ժողովից հետո կայացած (տե՛ս, **Ա. արքեպս. Մխիթարեանց**, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբ, Վաղարշապատ, 1874, էջ 85):

Թանգյանը[1] Հայաստանում տեղի ունեցած ժողովների մասին իրենց աշխատություններում լռում են Կարինի մեզ հետաքրքրող ժողովի մասին: Սակայն, այնուամենայնիվ, կան ուսումնասիրողներ, ովքեր փորձել են ցույց տալ տվյալ կանոնախմբի վավերական լինելը, կամ փորձել են որևէ կերպ բացատրել դրա ընդգրկումը Կանոնագրքում: Այս ուսումնասիրությունների արդյունքում գիտության մեջ ձևավորվել է երեք հիմնական կարծիք այս ժողովի և հիշատակված կանոնների շուրջ, որոնք կփորձենք վերլուծել ստորև.

ա) ըստ առաջին կարծիքի, Կանոնախմբի նախաբանում հիշատակվող «հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ» արտահայտությունը վերաբերում է Արևելահռոմեական կայսրության Հուստինիանոս Ա (527-565 թթ)[2]. կայսերը, իսկ նույն տեղում հիշատակվող Հայոց Սահակ կաթողիկոսը Սահակ Բ Հարքացի (կամ Ուղկեցի, 534-539 թթ.) կաթողիկոսն է, հետևաբար ժողովը պետք է կայացած լինի Զ դարի առաջին կեսին (այս կարծիքին են Կ. Տեր-Մկրտչյանը[3], Ա. Հակոբյանը[4]):

---

[1] **Ն. արք. Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրաւունքը, Բ հրատարակութիւն, Ս. Էջմիածին, 2008:

[2] **Ю. А. Кулаковский**, նշվ. աշխ., էջ 464:

[3] Ըստ Տեր-Մկրտչյանի, ժողովը հավանաբար գումարվել է 527-532 թթ. միջակայքում, քանի որ 532 թ. պարսկա-բյուզանդական դաշինքից հետո, երբ Հայաստանն ամբողջությամբ անցել էր պարսիկներին, Հայ եկեղեցին պետք է որ ամեն եկեղեցական հարաբերություն խզած լիներ հույների հետ, իսկ հենց այս շրջանում որպես մի այսպիսի ժողովի գումարման հիմնավորում վերջինս նշում է այն հանգամանքը, որ Հուստինիանոս Ա-ը, տեսնելով, թե որքան վտանգավոր կարող է լինել կայսրության համար հակաքաղկեդոնական եկեղեցիների դեմ տարվող քաղաքականությունը, որոշում է այդպիսով սիրաշահել նրանց, ինչի արդյունք է համարում նաև Թեոդորա կայսրուհու միաբնակ եկեղեցիներին հարելու հանգամանքը (**Կ. Տեր-Մկրտչեան**, Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մասն Ա, Վաղարշապատ, 1908, էջ 196-198):

[4] Նա իր տեսակետը բացատրում է նրանով, որ ժողովի կանոններում չկան այնպիսի քննարկումներ, ինչպիսիք հատուկ էին Է դարին՝ Սահակ Գ Ձորափորեցու գահակալության շրջանում, բացի այս, որպես իր կարծիքի հիմնավորում, բերում է այն հանգամանքը, որ Հուստինիանոս Ա-ի օրոք Հայ եկեղեցու հակաքաղկեդոնական լինելու փաստը վկայում են որոշ աղբյուրներ, ինչի հետ մենք համաձայն ենք, սակայն այս հանգամանքը չի դարձնում տվյալ ժողովը վավերական: Նա նաև նշում է, որ «Գիրք թղթոց» դավանաբանական ժողովածուում պահպանված՝ «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, մեծի իմաստասիրի Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր

բ) Երկրորդ կարծիքն այն է, որ հիշատակվող կայսրը Հուստինիանոս Բ (վերջինս գահակալել է երկու փուլով՝ 685-695 թթ. և 705-711 թթ)[1]. կայսրն է, իսկ Հայոց կաթողիկոսը՝ Սահակ Գ Ձորափորեցին (677-703 թթ.)[2], հետևաբար այս ժողովը պետք է տեղի ունեցած լինի Է դարի երկրորդ կեսին, ինչը բացատրվում է նաև Հինգվեցյան կոչված Տրուլլյան ժողովի (692 թ.)[3] կանոնների և Կարինի մեզ հետաքրքրող ժողովի կանոնների միմյանց հետ առնչությամբ (այս կարծիքին են Մ. Օրմանյանը[4], Մ. Վան Էսբրուկը[1]):

վասն հաւատոյ գրեալն էր» վերտառությամբ Ը դարի գրությունը (Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 323-334) հաղորդում է ավելի մանրամասն տեղեկություններ մեզ հետաքրքրող ժողովի մասին, ինչպիսիք նշված գրությունը կարդալուց հետո մենք չըգտանք, քանի որ վերոնշյալ թղթում ոչ թե ժողովի մասին է մանրամասներ հաղորդվում, այլ թղթի հեղինակը անդրադառնում է որոշ ծիսական խնդիրների, որոնց վերաբերյալ կան կանոններ մեզ հետաքրքրող կանոնախմբում (**Ա. Յակոբեան**, Սահակ Ուղկացին եւ Կարնոյ ժողովի կանոնները, Մատենագիրք Հայոց, Գ հատոր, Ձ դար, Անթիլիաս, 2004, էջ 373-375):

[1] **Ю. А. Кулаковский**, նշվ. աշխ., էջ 464:

[2] **Ն. Թահմիզյան**, Սահակ Ձորափորեցին և Խաչի ու Եկեղեցու շարականները, «Էջմիածին», 1980, հ. ԺԱ, էջ 37:

[3] Այս ժողովը գումարվել է Կոստանդնուպոլսի կայսերական պալատի Տրուլլա կոչվող գմբեթավոր սրահում, այդ պատճառով անվանվում է Տրուլլյան ժողով, որի ընթացքում ընդունվել է 102 կանոն: Ե և Ձ «տիեզերաժողովներում» քննարկվել են միայն դավանաբանական բնույթի հարցեր և որպես այդպիսիք առանձին կանոններ կարելի է ասել չեն սահմանվել, հետևաբար գումարվում է նաև այս ժողովը, որի նպատակն էր կարգապահական և ծիսական խնդիրները կարգավորող կանոնների սահմանումը, այդ պատճառով այս ժողովն ընդունված է անվանել նաև Հինգվեցյան, որ նշանակում է հինգերորդի և վեցերորդի լրացում (**C. J. Hefele**, Conciliengeschichte. nach den Quellen bearbeitet, III Band, Freiburg, 1877, S. 328-345. **Деянія вселенскихъ соборовъ**, томъ шестый, издание третье, Казань, 1908, ст. 266-298 (այսուհետ՝ Деянія вселенскихъ соборовъ). **Ի. արքեպս. Փափազեանց**, Պատմութիւն եկեղեցական, Վենետիկ, 1848, էջ 315-316) :

[4] Օրմանյանը նշում է, որ Հերակլ և Կոստանդին կայսրերից հետո սա կայսրության երրորդ փորձն է հայերի և հույների միջև հաղորդական միություն ստեղծելու: Ըստ նրա, Հուստինիանոս Բ-ն որդեգրել էր բացարձակ քաղկեդոնական դիրքորոշում և, ի տարբերություն իր երկու նախորդների, մերժում էր նույնիսկ միակամության վարդապետության միջոցով հակաքաղկեդոնականների հանդեպ որոշակի զիջումների գնալու միտքը: Սակայն, այնուամենայնիվ, Օրմանյանն անհնար է համարում Հուստինիանոս Բ-ի կողմից ժողովի որոշումների հետ համաձայն լինելու հանգամանքը, ինչը բացատրում

գ) Երրորդ տեսակետն այս ժողովի և նշված կանոնախմբի վերաբերյալ այն է, որ դրանք հետագա պատմության հորինվածք են և «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ են ներգրավվել վստահաբար Հովհաննն Օձնեցուց հետո: Այս առումով կա երկու կարծիք. առաջինը, որ հիշյալ կանոնները գրվել են Ը դարի առաջին կեսին կամ էլ Օձնեցուց հետո (Հ. Տաշեան)[2] և երկրորդը՝ դրանք հավանաբար Ժ-ԺԱ դդ. հորինվածք են (Ն. Գարսոյան)[3], որոնք «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ են մտցվել ոչ՛ Հովհաննն Օձնեցու խմբագրության ժամանակ և ո՛չ էլ Ժ դարի

է ժողովից հետո Սահակ Գ կաթողիկոսի հանդեպ Հուստինիանոս Բ-ի խիստ դիրքորոշմամբ (**Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, Կ. Պոլիս, 1912 , էջ 766-767):

[1] Ըստ Վան Էսբրուկի, Կարինի այս ժողովի կանոնների շարահյուսական դարձվածքները Հինգվեցյանից դրանց ազդված լինելն են վկայում, ինչն էլ ցույց է տալիս, որ ժողովը գումարվել է Հուստինիանոս Բ-ի գահակալության շրջանում: Նա շարունակում է՝ նշելով, որ այս ժողովը, ակնհայտորեն հակադրվելով Հինգվեցյանի հակահայկական որոշումներին, զիջում է հայերին նրանց սովորույթների և մասնավոր ծեսերի կատարման իրավունքը, բացի Քաղկեդոնի դեմ հակադրվելուց (**Մ. Վան Էսբրուկ**, Բյուզանդիայի հայկական քաղաքականությունը սկսած Հուստինիանոս Բ-ից մինչև Լևոն Գ, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 1997, հ. Զ-Է, էջ 172): Այստեղ պետք է նշենք, որ եթե Վան Էսբրուկի տեսակետի առաջին մասը դեռևս քննության պետք է ենթարկվի, ապա երկրորդ հատվածը մեզ համար անհասկանալի է, քանի որ ժողովի կանոնախմբի նախաբանում բացահայտորեն նզովվում է Լևոն պապի տոմարը, Ա. կանոնը պատվիրում է Տիրոջ Հայտնության (իմա՝ Ծննդյան) տոնը նշել հունվար 6-ին և ոչ թե դեկտեմբեր 25-ին, իսկ Ը կանոնը քաղկեդոնականությունը համեմատում է նեստորականության հետ (Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 245-246, 254): Ինչ են այս փաստերը, եթե ոչ Քաղկեդոնի 451 թ-ի ժողովի մերժում:

[2] Տաշյանը համարում է բացարձակապես անհնար մի այսպիսի ժողովի պատմական իրողությունը: Նա նշում է, որ կանոնախմբի հորինողը ցանկանում է Հուստինիանոս Բ-ի և Սահակ Գ Ձորոփորեցի կաթողիկոսի օրոք մի այսպիսի ժողով գումարել տալ, որն անհնարին է, քանի որ հույները և առավելևս հռոմեացիները չէին կարող Լևոն պապի տոմարի և Քաղկեդոնի 451 թ-ի ժողովի կանոնների դեմ որոշումներ ընդունել, այն էլ մի այնպիսի պայմաններում, երբ Հուստինիանոս Բ-ն այդպես հակահայկական քաղաքականություն էր վարում, իսկ դեռևս վերջերս կայացել էր Տրուլլյան ժողովը, որտեղ ընդունվել էին Հայ եկեղեցու դավանանքին հակասող երեք կանոններ (դրանք իրականում չորսն են, տե՛ս ստորև մեր ուսումնասիրությունը) (**Յ. Վ. Տաշեան**, Վարդապետութիւն Առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը, Վիեննա, 1896, էջ 240-242):

[3] Գարսոյանը կանոնախումբը համարում է Ժ-ԺԱ դդ. հնարված կեղծիք՝ վերագրված հորինված մի ժողովի (**Ն. Գարսոյան**, Հաղորդության սուրբ բաժակի (=սկիհի) անապակ գինին Հայոց եկեղեցում, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2010, հ. Է, էջ 15):

խմբագրության, այլ միայն ԺԱ դարի խմբագրության (Վ. Հակոբյան[1], Պ. Հովհաննիսյան[2]):

Ինչպես տեսնում ենք խնդիրը դիտարկվում է Զ-ԺԱ դարերի շրջանակներում, քանի որ մինչև «Կանոնագիրք Հայոց»-ի ԺԱ դարի խմբագրությունը ԽԲ համարի կանոնախումբն առհասարակ բացակայում է հիշյալ ժողովածուից, իսկ Զ դարից առաջ գոյություն չունեն նախաբանում հիշատակվող անուններին համապատասխան գործող անձինք: Սակայն ի վերջո, ո՞րն է նշված կարծիքներից առավել հավանական:

Հուստինիանոս Ա կայսրը պատմագրության մեջ հայտնի է մեկ պետություն, մեկ օրենք և մեկ ուղղափառ[3] եկեղեցի քաղաքականությամբ[4], որտեղ նա մեծագույն դերակատարություն էր շնորհել կայսերական եկեղեցուն: Եկեղեցուն շնորհած առանձնահատուկ գործառույթները Հուստինիանոս Ա-ը որպես կանոն հաստատում էր հատուկ հրամանագրերով և օրենքներով, ուստի նա ծայրահեղ խիստ քաղաքականություն էր վարում ոչ միայն այն եկեղեցիների նկատմամբ, որոնք չէին ընդունում 451 թ. Քաղկեդոնի ժողովի ուղղափառությունը, այլև առհասարակ կայսրության տարածքի բոլոր այլադավանների և այլակրոնների նկատմամբ[5]: Հետևաբար անհնար է նրա կողմից այսպիսի կանոններով ժողովի գումարումը, որը հստակ հակաքաղկեդոնական դիրքորոշում ունի:

Եթե խնդիրը դիտարկենք այն տեսանկյունից, որ վերջինս փորձում էր այսպիսով սիրաշահել իր կայսրության արևելյան նահանգների այլադավաններին, ապա մեր համար անհասկանալի է Կարինի այս ժողովին ասորի միաբնակների չմասնակցելու փաստը[6], քանի որ կայսրության արևելյան նահանգներում, մասնավորապես Եգիպտոսում, Ասորիքում, Պաղեստինում և Միջագետքում վերջիններս ճնշող մեծամասնություն

---

[1] Վ. Հակոբյանը համաձայնվում է Հ. Տաշյանի վերոնշյալ կարծիքի հետ և ավելացնում, որ կանոնախումբը վստահաբար «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ է մտել միայն ԺԱ դ. խմբագրության ժամանակ (Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, Ներածություն, էջ C):

[2] **Պ. Յովհաննիսեան**, «Կանոնագիրք Հայոց»-ի Ժ եւ ԺԱ դարերի խմբագրութիւնները, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 727:

[3] Ուղղափառության քաղկեդոնական ընկալմամբ:

[4] История Византии, в трех томах, т. 1, Москва, 1967, ст. 267.

[5] Նույն տեղում, էջ 267-281:

[6] Կարինի 633 թ. ժողովի մասին հիշատակելիս՝ սկզբնաղբյուրները բազմիցս հաղորդում են ասորիների դրան մասնակցելու մասին:

էին կազմում և կարող էին ցանկացած պահի Բյուզանդական կայսրության այդ ժամանակվա ոխերիմ հակառակորդ՝ Սասանյան Պարսկաստանի համար դառնալ դաշնակիցներ: Տարօրինակ է նաև Լևոն պապի տոմարը նզովող ժողովում Հռոմի աթոռի մասնակցության հավանականությունը, ինչպես հաղորդվում է կանոնախմբի նախաբանում:

Է դարի առաջին կեսին՝ վրաց Կյուրիոն կաթողիկոսի գահակալության շրջանում, տեղի է ունենում Վրաց եկեղեցու բաժանումը Հայոց եկեղեցուց[1], որի հետևանքով վրացիներն ընդունում են քաղկեդոնական դավանանքի ուղղափառությունը[2]: Հետևաբար կասկածի տակ է դրվում նույն դարի վերջին տասնամյակում հակաքաղկեդոնական բնույթ ունեցող այսպիսի ժողովին վրացիների մասնակցությունը և այս բովանդակությամբ կանոնների ընդունումը:

Որպես այս տեսակետի հիմնավորում ուսումնասիրողները նշում են նաև 692 թ. տեղի ունեցած Տրուլլյան ժողովի կանոնների և մեզ հետաքրքրող կանոնախմբի միջև եղող թեմատիկ և ոճական կապը, ինչը մենք չենք ժխտում, սակայն այս հանգամանքը քիչ է, որպեսզի որպես Կարինի ժողովի գումարման շրջան որոշենք հենց է դարի վերջին տասնամյակը: Այստեղ ավելի ճիշտ է նշել, որ տվյալ կանոնախմբի բովանդակությունը կազմող որոշումները հավանաբար ձևավորվել են Տրուլլյան կամ Հինգվեցյան ժողովից հետո:

Բանն այն է, որ 692 թ. Տրուլլյան ժողովում սահմանվել են Հայ եկեղեցու ծեսին և կարգապահական որոշ հարցերին վերաբերող չորս կանոններ (կանոն ԼԲ, ԼԳ, ԾԶ և ՂԹ)[3], որոնցից ԼԲ (32) կանոնն առնչվում է հայերի անապակ գինով պատարագելու ավանդույթին՝[4] սահմանելով հետևյալը. «. . . Եթե որևէ եպիսկոպոս կամ քահանա չի գործում ըստ առաքյալների հաստատած կարգի՝ գինուն ջուր չխառնելով և այդպես ա-

---

[1] **Ն. Ակինեան**, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ, Վիեննա, 1910, էջ 243-256:

[2] **Ուխտանէս Եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, հատուած երկրորդ, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 1-132:

[3] **C. J. Hefele**, նշվ. աշխ., էջ 335, 337-338, 342-343. հմմտ. **Деянія вселенскихъ соборовъ**, ст. 282-283, 288-289, 297.

[4] Հայ եկեղեցում անապակ գինով պատարագելու խնդրի մասին տե՛ս, **Զ. վարդապետ Բաղումյան**, Անապակ բաժակի խնդիրը Հայոց եկեղեցում, Էջմիածին, 2013: Ինչպես նաև՝ **Ն. Գարսոյան**, նշվ. աշխ.:

նարատ պատարագ մատուցելով, նա պիտի արձակվի իր կարգից. . . »[1]: Այս խնդրի մասին է նաև Կանոնագրքի մեզ հետաքրքրող կանոնախմբի Ը (8) կանոնը[2], որը հաստատում է անապակ գինով պատարագելու հայկական ծեսը. «. . . ոմանք խմորեալ ի Նեստորականաց եւ ի Քաղկեդոնականաց, ապականեն զսուրբ խորհուրդն խառնմամբ խմորոյ եւ ջրոյ: Արդ՝ յայսմ հետէ եթէ եպիսկոպոս կամ երէց գտցի որ այսպիսի չար սովորութեամբ աւանդեսցին զսուրբ խորհուրդն՝ լուծցին յամենայն քահանայական պատուոյ եւ ի սուրբ ժողովոյն նզովեալ եղիցին»[3]: Ըստ ավանդույթի Հայ եկեղեցում թե՛ անապակ գինով և թե՛ բաղարջ (անթթխմոր) հացով պատարագելու սովորությունը հաստատել է Ս. Գրիգոր Լուսավորիչը[4], սակայն միայն Է դարի վերջի և Ը դարի սկզբի վարդապետների գրվածքներում ենք առաջին անգամ հանդիպում այս ավանդույթի հստակ հիմնավորում[5]: Դրանցից թերևս առաջինը Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսի անունով մեզ հասած դավանաբանական թուղթն է[6],

---

[1] Деянія вселенскихъ соборовъ, ст. 282-283.

[2] Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 254-255:

[3] Նույն տեղում, էջ 254:

[4] **Զ. վրդ. Բաղումյան,** նշվ. աշխ., էջ 55:

[5] Նույն տեղում, էջ 55-57:

[6] Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հոգելից հարցն սրբոց ըստ առաքելասահման աւանդիցն եկեղեցւոյ Քրիստոսի, հանդերձ հաւատաբանութեամբ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց, ասացեալ սրբո վարդապետին Սահակայ Հայոց կաթուղիկոսի եւ մեծի թարգմանչի ընդդեմ երկաբնակաց նեստորականացն, Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 413-482: Նորայր արք. Պողարյանը 1994 թ. Երուսաղեմում վերահրատարակած «Գիրք թղթոց» ժողովածուից հանել է այս թուղթը և առանձին հրատարակել՝ վերագրելով այն Թ դարի մի հեղինակի՝ Սահակ Վարդապետ Մռութ անունով (Սահակ վարդապետ (Մռուտ), Բացայայտութիւն, Երուսաղէմ, 1994, էջ 1-100: Այս հրատարակության աշխարհաբար-արևմտահայերենի փոխադրումը տե՛ս, Սահակ վարդապետ (Մռուտ), Բացայայտութիւն, գրաբար բնագիրէ թարգմանեց Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Երուսաղէմ, 2012), սակայն նա որևէ լուրջ կռվան չի ներկայացնում այս կարծիքը հիմնավորելու համար: Ուսումնասիրելով դավանաբանական այս գրվածքի բովանդակությունը՝ այս խնդրում մենք համաձայն ենք Զաքարիա վրդ.-ի հետ, որ այն պետք է գրված լինի կամ Է դարի վերջերին կամ էլ Ը դարի սկզբներին (**Զ. վրդ. Բաղումյան**, նշվ. աշխ., էջ 57, ծանոթագրություն 1), երբ հայոց մեջ աստվածաբանական քննարկումներից արդիական էին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Քրիստոսի մի բնության, մի ներգործության, մի կամքի և Նրա անապական մարմ-

որտեղ խոսվում է անխառն գինով պատարագելու մասին, սրանից առաջ եղած հստակ վկայություն մեզ հայտնի չէ:

Այս հանգամանքը ևս անհնար է դարձնում Թեոդոսուպոլիս/Կարինի ժողովի անունով մեզ հասած կանոնախմբի Զ դարին պատկանելը:

Այս ժողովի մասին իր «Գիրք հարցմանց» երկում մի վկայություն ունի նաև Ս. Գրիգոր Տաթևացին[1], որտեղ նա կրկնում է Կանոնագրքում գտնըվող կանոնախմբի նախաբանը նույնությամբ՝ ավելացնելով միայն, որ սա ոչ թե Կարինի այն ժողովն է «զոր *յեպոյ* Հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց», այլ մեկ այլ ժողով է՝ գումարված «հրամանաւ մեծի թագաւորին Ուստիանեայ»[2]: Դատելով Տաթևացու այս վկայությունից՝ նա նույնպես մեզ հետաքրքրող Կարինի ժողովը համարում է Զ դարի իրողություն, ինչն արդեն տեսանք՝ անհնար է: Տաթևացու մոտ խնդիրն այլ է, քանի որ իր երկի այս հատվածում նա նշում է Հայաստանում եղած առանձին ժողովների մասին, որոնք հաստատում են Հայ եկեղեցու ուղղափառ և առանձին դավանանքը քաղկեդոնականներից և այլ հարանվանություններից, իսկ ինչպես արդեն նշեցինք, միջնադարյան մեր գրեթե բոլոր մատենագիրները Եզր Ա Փառաժնակերտցուց բացի ևս հինգ կաթողիկոսների մինչև Ս. Հովհանն Օձնեցի համարում են քաղկեդոնականներ, հետևաբար Տաթևացին չէր կարող մի հակաքաղկեդոնական բնույթի կանոնախումբ վերագրեր Սահակ Գ Զորափորեցուն, որն այդ հինգից մեկն է:

Քաղկեդոնի 451 թ. ժողովից հետո հայոց և հունաց միության փորձերի մասին հետաքրքիր տեղեկություն է հայտնում Է դարի մատենագիր Մովսես Կաղանկատվացին իր «Պատմութիւն Աղուանից աշխարհի»[3] երկի Բ գրքի ԽԸ (48) գլխում. «Յետ որոյ նոցին հաւանեալքն բազում անգամ մրցեցան վասն Հայոց ի հաւասարիլ ընդ նոսա, էր որ թղթով, և բա-

---

նի հարցերը: Մ. Վան Էսբրուկը դավանաբանական այս թուղթը համարում է 691 թ. քիչ առաջ ընկած ժամանակվա գրվածք (**Մ. Վան Էսբրուկ**, նշվ. աշխ., էջ 172):

[1] **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 544:

[2] Նույն տեղում:

[3] Մովսես Կաղանկատվացու անունով մեզ հասած «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը բաղկացած է երեք գրքերից, որոնցից առաջին երկուսի հեղինակը Է դարի նույնանուն մատենագիրն է, իսկ երրորդ գլխի ամբողջական հեղինակն է Ժ դարի մատենագիր Մովսես Դասխուրանցին (**Պ. Յովհաննիսեան**, Մովսէս Կաղանկատուացին եւ իր «Աղուանից աշխարհի պատմութիւն»-ը, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Անթիլիաս, 2010, էջ 27):

զում անգամ դէմ յանդիման ժողովովք. կոչեցին միանգամ ի Կոստանդնուպօլիս, և *երկիցս ի Թէոդոսուպօլիս* (ընդգծումը մերն է), և ջանային ի-բրև զվրիպեալս շահիլ զնոսա: Այլ թէպէտ թագաւորական հրամանաւ յարակիրթ ճարտարքն Յունաց վստահանային ի սուր լեզուս հելլենական յորդաբանութեամբ յաղթող լինել, սակայն ընդնմին և զպատասխանիս լսէին. քանզի նորոգեալ էին ի Հայաստան եկեղեցիս ուսմունք, և յոյն լեզուին տեղեկագոյնք[1]»: Ինչպես տեսնում ենք մեջբերումից, նա հայտնում է ժողովական երեք փորձի մասին միություն կնքելու համար, որոնցից երկուսը պատմիչի հաղորդմամբ տեղի են ունեցել Թեոդոսուպոլսում (ի-մա՝ Կարինում), սակայն Կաղանկատվացին չի նշում, թե ում օրոք են այդ ժողովները տեղի ունեցել:

Այստեղ հիշատակվող Կոստանդնուպոլսի միության փորձը հավանաբար Հուստինիանոս Բ-ի կողմից գումարված ժողովն է, որի մասին հիշատակում է նաև "Narratio de rebus Armeniae'' հայ-քաղկեդոնականի ձեռքով գրված աղբյուրը[2], ըստ որի կայսրն իր թագավորության հինգերորդ տարում Կ. Պոլիս է հրավիրել Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսին և մի քանի այլ հայ եպիսկոպոսների, ապա միություն կնքել նրանց հետ[3]: Հուստինիանոս Բ կայսեր և Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսի հանդիպման մասին տեղեկություն է հաղորդում նաև Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ պատմիչը[4], որի համաձայն Հուստինիանոս Բ-ն իր գահակալության չորրորդ տարին զորքով արշավում է Հայաստան և, ամրանալով Արարտակ[5] կոչվող ինչ որ լեռան մոտ, զորամիավորումներ է ուղարկում «ի Հայս, ի Վիրս եւ յԱղուանս»՝ ստիպողաբար իր մոտ կանչելով նրանց իշխաններին ինչպես նաև Հայոց Սահակ կաթողիկոսին «հանդերձ Ե եպիսկոպոսաւք»[6]: Հաշվի առնելով վերջին երկու աղբյուրների

---

[1] **Մովսեսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից Աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 215-216:

[2] Narratio, էջ 457-470:

[3] Նույն տեղում, էջ 469:

[4] **Ստեփանոս Տարոնեցի**, էջ 102-103:

[5] Լեռ Հայկական լեռնաշխարհում, որի ճշգրիտ տեղը հայտնի չէ, սակայն ոմանք այն ենթադրաբար տեղադրում են Մեծ Հայքի Այրարատ նահանգի Բասեն գավառում (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 1, 1986, էջ 398-399):

[6] **Ստեփանոս Տարոնեցի**, էջ 102:

հայտնած տեղեկությունները՝ այս ժողովը պետք է որ տեղի ունեցած լինի 689/90 թթ.[1], այսինքն Տրուլլյան ժողովից ոչ այնքան շուտ:

Առհասարակ Ընդհանրական եկեղեցու ծիսական և կարգապահական բնույթի խնդիրների քննարկման համատեքստում Տրուլլյան ժողովը բազմաթիվ հակասությունների առիթ է տվել դեռևս դրա կանոնների վավերականացման ընթացքում, քանի որ ժողովի ավարտից հետո Հռոմի աթոռի այդ ժամանակվա գահակալ Սերգիոս Ա-ը (687-701 թթ.) հրաժարվել է ստորագրել ժողովում ընդունված կանոնների տակ[2], քանի որ այնտեղ ընդունված 102 կանոնների մի մասն ուղղված են եղել հենց Հռոմի եկեղեցու դեմ[3]: Հուստինիանոս Բ կայսրը, իմանալով, որ Հռոմի եկեղեցու գահակալը հրաժարվել է ստորագրել այդ կանոնների ժողովական թուղթը, հրամայել է ստիպողաբար նրան բերել Կ. Պոլիս, ինչը սակայն չի հաջողվել[4]: Այսպիսով Է դարի վերջերին Հուստինիանոս կայսեր գործունեության արդյունքում ծիսական և կարգապահական լուրջ խնդիրներ են առաջանում նույնիսկ Հռոմի աթոռի հետ:

Գալով այն տեսակետին, որ «Կանոնագիրք Հայոց»-ի այս կանոնախումբը մի կեղծիք է՝ հորինված հավանաբար Ժ-ԺԱ դդ.՝ պետք է նշենք, որ համաձայն ենք Հ. Տաշյանի այն կարծիքին, ըստ որի այս կանոնախմբի հորինողը փորձում է այսպիսի բովանդակությամբ ժողով գումարել տալ Սահակ Գ Ձորափորեցու և Հուստինիանոս Բ-ի օրոք, սակայն հարց է առաջանում, ո՞րն է պատճառը՝ Ժ-ԺԱ դդ. մի այսպիսի գրություն կազմելու և Կանոնագրքի մեջ ներգրավելու:

---

[1] **Մ. Վան Էսբրուկ**, նշվ. աշխ., էջ 176: Ն. Գարսոյանը կասկածի է ենթարկում Սահակ Գ կաթողիկոսի կողմից քաղկեդոնական ծեսի ընդունումն ու առհասարակ Կ. Պոլիս գնալը, ինչը տեղին է, քանի որ Ստեփանոս Տարոնեցու հայտնած տեղեկությունից չի հասկացվում կաթողիկոսը գնա՞ց Կ. Պոլիս, թե՞ ոչ (**Ն. Գարսոյան**, նշվ. աշխ., ծանոթ. 9, էջ 15): Ամեն դեպքում փաստ է, որ Հուստինիանոս Բ-ի և Սահակ Գ կաթողիկոսի օրոք առնվազն մեկ անգամ դավանաբանական միության փորձ եղել է:

[2] **А. Величко**, История византийских императоров, от Юстина I до Феодосия III, Москва, 2012, ст. 401.

[3] Խնդիրը մի քանի կանոններ էին, որոնք բացահայտ ուղղված էին Հռոմի եկեղեցու ավանդույթներին (այս մասին տե՛ս, **C. J. Hefele,** նշվ. աշխ., էջ 345-348. Деянія вселенскихъ соборовъ, ст. 266-270. **А. П. Лебедев**, Исторія вселенскихъ соборовъ, часть II, изданіе второе, Москва, 1897, ст. 124-125.)

[4] **А. Величко,** նշվ. աշխ., էջ 401-402:

Ժ-ԺԱ դարերում բոլորովին նոր թափ է ստանում վրացական գրականությունը: Ցանկությունը՝ մշակութապես նմանվել Բյուզանդիային այնքան է սրանում, որ վերանայվում է ողջ վրացական գրականությունը՝ հատկապես թարգմանական գրականությունը[1]: Այս շրջանում ջնջվում են արևելյան գրականության հետ կապը հիշեցնող գրեթե բոլոր հետքերը և հատկապես հայկական գրականության հետքերը[2], ինչը վստահաբար չէր կարող ուղղակի ազդեցություն չունենար նաև հայ գրականության շեշտադրումների վրա ժամանակի հայ մատենագիրների մոտ:

Վրաց գրականության այս վերանայման գործընթացը սկսում են Աթոնի իբերական վանքի վանականները, որոնցից Եփիմիոս Աթոնեցու (Ժ-ԺԱ դդ.)[3] գրչին է պատկանում «Զ տիեզերաժողովի կանոնների»[4] վրացերեն թարգմանությունը[5]:

Այս բնագիրը հետաքրքիր է նրանով, որ իր մեջ ներառելով 692 թ. Տրուլլյան ժողովի 102 կանոնների մի մասը՝ ընդգրկում է միայն 100 կանոն, որոնցից մի զգալի հատվածը որևէ զուգահեռ չունի Տրուլլյան ժողովի կանոնների հետ կամ ներկայացված է այստեղ վերամշակված ձևով[6]: Ինքնուրույն գրվածք է նաև այս կանոնախմբի նախաբանը, որը չի համապատասխանում ո՛չ Զ «տիեզերաժողովի» գործողությունները ներկայացնող հունարեն սկզբնաղբյուրներին և ո՛չ էլ Տրուլլյան ժողովի հիշատակումներին[7]:

---

[1] **К. С. Кекелидзе**, Конспективный курс истории древне-грузинской литературы, Тбилиси, 1939, ст. 42.

[2] Նույն տեղում, էջ 42:

[3] Նույն տեղում, էջ 44:

[4] Բյուզանդական քաղկեդոնիկ ավանդույթին հետևող միջավայրում շատ հաճախ Զ «տիեզերաժողովի» կանոններ են անվանում վերոնշյալ Տրուլլյան ժողովի կանոնները (**Деянія вселенскихъ соборовъ,** ст. 266-270): Այս տրամաբանությանն է հետևում նաև Եփիմիոս Աթոնեցին:

[5] **А. С. Хахановъ**, Правила VI Вселенскаго собора въ грузинскомъ переводе св. Евфимія, XI века, “Древности восточныя. Труды восточной комиссіи”, т. II, выпускъ III, Москва, 1903, ст. 76-159. Հմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 102-104:

[6] **А. С. Хахановъ,** նշվ. աշխ., էջ 77-156. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 103:

[7] **А. С. Хахановъ,** նշվ. աշխ., էջ 138:

Վրացերեն այս բնագրում ընդգրկված կանոններից հինգը (ԺԶ, ԺԷ, ԼԳ, ԼԴ և ԿԸ) հստակ վերաբերում են Հայ եկեղեցուն[1], որոնցից ԺԷ և ԼԴ կանոնները՝ որոշ խմբագրական տարբերություններով, համապատասխանում են Տրուլլյան ժողովի ԾԶ և ԼԳ կանոններին, իսկ մնացած երեքը՝ ԺԶ, ԼԳ և ԿԸ, վրացերեն թարգմանության մեջ ավելացված են: Ավելացված այս կանոններից ԺԶ-ն արգելում է պահել «առաջավոր» կոչվող պահքը[2], ԼԳ-ն «Երեքսրբյան» սրբասացության մեջ հայերի կողմից «որ խաչեցար վասն մեր» արտահայտության ավելացման դեմ է, իսկ ԿԸ-ն հայերի կողմից պատկերներ չպաշտելուն է ուղղված[3]: Հունարեն բնագրին այսպիսի ավելացումները վկայում են վրացերեն այս գրվածքի հստակ հակահայկական բնույթը, ինչը նշում է հիշյալ կանոնախմբի վրացերեն բնագրի հրատարակող Խախանովը՝ ավելացնելով, որ սա ոչ թե Զ «տիեզերաժողովի» (այս պարագայում 692 թ. Տրուլլյան ժողովի) իրական կանոնների վրացերեն փոխադրությունն է, այլ ինքնուրույն գրվածք է՝ հարմարեցված վրացիների խնդիրներին[4]:

Ի մի բերելով այստեղ քննարկված խնդիրները՝ կարող ենք հստակ ասել, որ Է դարի վերջերին՝ Հուստինիանոս Բ-ի գահակալության շրջանում, եկեղեցու ծիսական և կարգապահական խնդիրների շուրջ տեղի են ունեցել Կ. Պոլսի եկեղեցու և կայսրության տարածքի մյուս աթոռների միջև «միջեկեղեցական» քննարկումներ, որտեղ Տրուլլյան ժողովի պատճառով կայսրության հետ հակասության մեջ է մտել նույնիսկ Հռոմի եկեղեցին: Տրուլլյան ժողովի կանոնների վրացական տարբերակից հստակ երևում է, որ այնտեղ ընդունված կանոնների հետ ամբողջությամբ համաձայն չեն եղել նաև վրացիները, իսկ Հայաստանում եղած ժամանակ չենք բացառում, որ Հուստինիանոս Բ-ն ու Սահակ Գ Ձորափորեցի կա-

---

[1] **Նույն տեղում**, էջ 145-146. Այս կանոնների հայերեն մասնակի թարգմանությունը տե՛ս, **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 104:

[2] Այս պահքի և վրացիների կողմից դրա նկատմամբ վերաբերմունքի ավանդույթի մասին տե՛ս, **Л. Меликсетъ-Бековъ**, Грузинскій изводъ сказанія о посте «араджаворъ», Христианскій восыокъ, томъ V, выпускъ II, Петроградъ, 1917, ст. 73-111.

[3] **А. С. Хахановъ,** նշվ. աշխ., էջ 145, 146, 156, հմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 104: Այս կանոններից առնվազն երկուսի բովանդակած խնդիրները քննարկման նյութ են դարձել միայն Ը դարից, հետևաբար դրանք չէին կարող ո՛չ 692 թ. Տրուլլյան ժողովի և ո՛չ էլ առավել ևս 681 թ. Զ «տիեզերաժողովի» հետ որևէ կապ ունենալ:

[4] **А. С. Хахановъ,** նշվ. աշխ., էջ 159:

թողիկոսը հանդիպում ունեցած լինեն հենց Թեոդոսուպոլսում, քանի որ 591 թ. Հայաստանի բաժանումից հետո այս քաղաքը դարձել էր Հայաստանի բյուզանդական մասի կենտրոն, եթե նույնիսկ այստեղ էլ հանդիպած չլինեն, այն փաստը, որ առնվազն մեկ անգամ հայկական տարածքում հանդիպում եղել է, ինչպես տեսանք, վկայված է հայ մատենագրության մեջ: Ուստի այս շրջանն ամենից շատն է համընկնում Կանոնագրքի Թեոդոսուպոլիս/Կարինի ժողովի կանոնախմբի նախաբանում հիշատակվող դեպքերին, սակայն անհնար ենք համարում հիշյալ կանոնախմբի է դարում կազմված լինելը:

Հավանաբար այս կանոնախմբի կազմվելու պատճառ են հանդիսացել Ժ-ԺԱ դդ. ծիսական և կարգապահական տարբեր հարցերում ուժգնացող հակահայ մեղադրանքները, հատկապես վրացիների կողմից, որի արդյունքում էլ ժամանակի հայ վարդապետները, հիմնվելով Հայ եկեղեցու մինչ այդ եղած հայրերի գրվածքների վրա, կազմել են այդ վիճաբանական հարցերը կարգավորող կանոնախումբ և, հաշվի առնելով պատմական այն կցկտուր տվյալները, որտեղ հաղորդվում է Հուստինիանոս Բ կայսեր և Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսի օրոք տեղի ունեցած դավանաբանական երկխոսության մասին, վերագրել են այդ կանոնախումբը մի ժողովի, որն իբրև թե տեղի է ունեցել Թեոդոսուպոլիս/Կարինում և ընդգրկել «Կանոնագիրք Հայոց»-ում:

«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ԹԵՈԴՈՍՈՒՊՈԼԻՍ/-ԿԱՐԻՆԻ ԺՈՂՈՎԻ ՀԱՐՑԸ

Սարգիս Մելքոնյան

Բանալի բառեր *- «Կանոնագիրք հայոց», Թեոդոսուպոլիս/Կարինի ժողով, Սահակ Գ Ձորափորեցի, Հուստինիանոս Բ, Տուլյան ժողով, Հինգվեցյան ժողով, Զ «տիեզերաժողով», Եփիմիոս Աթոնեցի:*

«Կանոնագիրք Հայոց»-ի ԽԲ (42) համարի տակ հիշատակվում է Թեոդոսուպոլիս/Կարինի ժողովի անունով մի կանոնախումբ, որը բաղկացած է ծիսական և կարգապահական տարբեր հարցեր կարգավորող ինը կանոններից, որոնք Կանոնագրքի մեջ են մտել միայն ԺԱ դ. խմբագրության ժամանակ: Կանոնախմբի նախաբանում հաղորդվում է, որ այս ժողովը տեղի է ունեցել Հուստինիանոս կայսեր և հայոց Սահակ կաթողիկոսի օրոք, սակայն չի նշվում թե որ Հուստինիանոսի և որ Սահակ կաթողիկոսի: Բացի այս կանոնախումբն ունի

հստակ հակաքաղկեդոնական շեշտադրում, ինչը հակասում է դրա նախաբանին, ըստ որի, այսպիսի կանոններով ժողովին բացի հույներից մասնակցել են նաև հռոմեացիները: Խնդիրն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ այսպիսի կանոններով ժողովի մասին որևէ այլ տեղեկություն հայ մատենագրության մեջ մինչև ԺԱ դ. չկա, ինչը նույնպես կասկածի տակ է դնում այս կանոնախմբի վավերականությունը:

Այս կանոնախմբում կան խնդիրներ, որ միջեկեղեցական հարաբերություններում քննարկման նյութ են դարձել միայն Է դարի վերջերին կամ Ը դարի սկզբներին (օրինակ՝ Ը կանոնում տեղ գտած անապակ գինով պատարագելու խնդիրը), ինչը բացառում է դրա Զ դարում կազմված լինելը: Առհասարակ Ընդհանրական եկեղեցում ծիսական և կարգապահական խնդիրները հստակ քննարկման և վիճաբանությունների նյութ են դարձել Հինգվեցյան կոչվող Տրուլլյան ժողովից (692 թ.) հետո, որի արդյունքում վեճ է առաջացել նույնիսկ Կ. Պոլսի և Հռոմի աթոռների միջև: Այս ընթացքում առնվազն մեկ անգամ հաղորդական միության փորձ է եղել նաև Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսի և Հուստինիանոս Բ կայսեր միջև, հետևաբար մեզ հետաքրքրող կանոնախմբի նախաբանում հիշատակվող դեպքերը, թեկուզև ավելի ծայրահեղացրած, բայց, ըստ երևույթին, հենց Է դարի երկրորդ կեսին են վերաբերում, սակայն այս հանգամանքը չի հիմնավորում այսքան հստակ հակաքաղկեդոնական կանոնների ընդունումը կամ նույնիսկ քննարկումը Է դարում հույների, հռոմեացիների և այդ ժամանակ արդեն քաղկեդոնականություն ընդունած վրացիների կողմից:

Այս կանոնախումբը վստահաբար կազմվել է Ժ-ԺԱ դդ. ընթացքում: Հավանաբար դրա հիմնական պատճառ է հանդիսացել նույն ժամանակաշրջանում Աթոն լեռան իբերական վանքի վանականների կողմից նախաձեռնած վրացական գրականության վերանայման գործընթացը, որի արդյունքում հայտնվում են բազմաթիվ հակահայ շեշտադրումներ ունեցող գրվածքներ: Այսպիսիների շարքին է պատկանում նաև «Զ տիեզերաժողովի կանոնների» վրացական տարբերակը, որի հեղինակն է Ժ դարի վերջում և ԺԱ դարի սկզբում ակտիվ թարգմանական գործունեություն ծավալած Եփիմիոս Աթոնեցին: Սա մի ինքնուրույն գրվածք է, որը չի համապատասխանում հունարեն բնագրին և ունի հստակ հակահայ շեշտադրում՝ մասնավորապես ծիսական և կարգապահական հարցերում:

Այսպիսով մենք չենք բացառում, որ Հուստինիանոս Բ կայսրն իր՝ Հայաստանում եղած ժամանակ Թեոդոսուպոլիս/Կարինում հանդիպած լինի Սահակ Գ կաթողիկոսին, սակայն Կանոնագրքի հիշյալ կանոնախումբը վստահաբար հետագա հորինվածք է:

ВОПРОС СОБОРА В ФЕОДОСИОПОЛЬ/КАРИНЕ УПАМИНАЮЩИЙСЯ В «АРМЯНСКОЙ КНИГЕ КАНОНОВ»

Саргис Мелконян

Ключевые слова *- «Армянская книга канонов» в XI веке, Феодосиополь/Каринский собор, Саак III Дзорапореци, Юстиниан II, Труллский собор, Пято-шестой собор, VI «вселенский собор», Евфимий Афонский.*

В «Армянской книге канонов» под 42-ым номером упоминается собрание канонов, известным под именем собора Феодосиополь/Карина, которая состоит из девять канонов, урегулирующих разные обрядовые и дисциплинарные вопросы, которые вошли в Книгу канонов только после редактирования произошедшем в XI в. В предисловии собрания этих канонов сообщается, что этот собор был созван во время правления императора Юстиниана и армянского католикоса Саака, но здесь не отмечается, который из нам известних Юстинианов и Сааков. Кроме этого это собрание канонов имеет явный антихалкедонский характер, что противоречит сведениям в предисловии этих канонов, где говорится, что на соборе с такими канонами кроме греков, приняли участие и римляне. Еще одна проблема состоит в том, что о соборе с такими канонами нет никакого сведения в армянских средновековых источниках до XI века, что и ставит под сомнение вопрос подлинности этого писания.

В этом собрании канонов есть проблемы, которые стали причинами обсуждения в межцерковных отношениях только в конец VII века и в начале VIII (к примеру проблема безводного вина во время святой литургии в VIII каноне), что исключает возможность, что эти каноны были составленны в VI веке. В целом, во Вселенской церкви обрядовые и дисциплинарные вопросы стали предметом обсуждения и споров в основном после Пято-шестого или Труллского собора (692 г.), в результате чего произошел церковный спор даже между Константинополем и Римом. В это время по меньшей мере один раз была встреча между Юстинианом II и Сааком III католикосом, так что события, указанные в предисловии этого сборника канонов, должны относится к второй половине VII века, но это обстоятельство не доказывет принятие столь конкретных антихалкедонских канонов или даже их обсуждение в VII веке со стороны греков, римлян, и в это время уже принявших халкедонскую веру грузин.

Это собрание канонов определенно была составлена в X-XI в. По всей вероятности основная причина составления этих канонов была ревизия грузинской средновековой литературы монахамы иверского монастыря на Афонском горе, в X-XI вв. Во время которого появляются много антиармянских писаний. К ряду

таких писаний относится грузинская версия “Правил VI вселенского собора”, автором которого яляется Евфимий Афонский, живший в конце X и в начале XI вв. Это самостоятельное писание, которое не совпадает с греческим оригиналом и имеет выражено антиармянский характер именно в обрядовых и дисциплинарных вопросах.

Таким образом, мы не исключаем вожможность, что император Юстиниан II во время своего визита в Армению встретился с Сааком III в Феодосиополь / Карине, но вышеупоминаемое собрание канонов в “Армянсой книге канонов” несомненно является сочинением дальнейших веков.

THE QUESTION OF THE COUNCIL IN THEODOSIOPOLIS/ KARIN MENTIONED IN THE “ARMENIAN BOOK OF CANONS”

Sargis Melkonyan

Keywords: *“Armenian Book of Canons”, the Council in Theodosiopolis/Karin, Sahak III Dzoraporetci, Justinian II, the Council in Trullo, the Quinisext Council, 6th “ecumenical council”, Euthymius the Athonite.*

A group of canons is mentioned to have the name of the Council in Theodosipolis/Karin under the number of 42th in the “Armenian Book of Canons”. That group of canons consists of 9 canons regulatingvarious disciplinaryand ritual issues. The canons were included into the book only during the 11th century edition.The introduction (of the canons) states that the council took place in times of Imperator Justinian and Catholicos Sahak, but there is no information about which Justinaian and Catholicos Sahak. Moreover, the group of canons has anti chalcedonic character which contradicts its introduction. According to the latter, besides Greeks, Romans also participated in the council. This fact further complicatesthe problem, because there is no information about a council with such canons in the Armenian literature until the 11th century. It puts the validity of the canons under suspicion.

There are problems in these canons, which became a topic of discussion among churches only in the 7th or in the 8th centuries, (for instance the eighth canon dedicated to liturgy being passed through pure vine), which excludes the possibility of its being written in the 6th century.The ritual and disciplinary problems were also discussed and became a matter of discord in the Church after the Council in Trullo (the Quinisext Council) in 692. As a result there was a debate between the churches of Costantinople and Rome. There was only one meeting between the Catholicos Sahak Dzoraporeci and Justinian, therefore the events, mentioned in the

introduction of group of canonswe were interested in, relate to the seventh century. However, this circumstance doesn't ground acceptance of canons of non-chalcedonianismor even their discussion by Greeks, Romans and Georgians, who accepted Chalcedon at that time.

This group of canons surely was formed during the 10-11th centuries. The major cause of this may have been the revision of Georgians literature, which was organized by Iberian monastery monks in the same time, the monastery was in mountain of Athos. There were many anti Armenian writings as a result of the revision of Georgian literature. The Georgian version of «Canons of 6th ecumenical council» belongs to this group. The author of this version is Euthymius the Athonite, who did translations late in the 10th century and early in the 11th century. This version is an independent version, which doesn't correspond to Greek original and has anti Armenian emphasis particularly in ritual and disciplinary matters.

Thus, we don't exclude that Imperator Justinian, when in Armenia met Catholicos Sahak 3th in Theodosipolis/Karin, but the mentioned group of canons surely was fiction.